ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԼԱՐԱՅԻՆ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՑԱՆՑՈՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N << ՊԵԿ-ՇՀԾՁԲ-17-2-15/18>>

ք. Երևան << 09 >> հունվարի 2017թ.

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար Ա.Սահակյանի, որը գործում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Յուքոմ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ.Եսայանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի կարիքների համար լարային հեռահաղորդակցական ցանցով տվյալների փոխանցման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 2) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 2.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **88 800 000 (ութսունութ միլիոն ութ հարյուր հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցված Ծառայության արդյունքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի 7.1 կետով նախատեսված կնքվելիք համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված Ծառայության մատուցումը իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:

Սույն պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքվելու օրվան հաջորդող տարվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	«Յուքոմ» ՍՊԸ
ք.Երևան, Մ.Խորենացու-3,7	ք. Երևան, Տերյան 19, բն. 4
ՀՎՀՀ 02647057	ՀՎՀՀ 00024873
Հ/Հ 90001106575	Հ/Հ 217001264993001
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝	«Յուքոմ» ՍՊԸ-ի տնօրեն՝
Լ.Սահակյան	Հ.Եսայան

Հավելված 1
«09» հունվարի 2017 թ. կնքված
N ՊԵԿ-ՇՀԾՁԲ-17-2-15/18 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ ԿԱ ՊԵԿ տվյալների փոխանցման տեղեկատվական ցանցի սպասարկման ծառայություններ

ՀՀ ԿԱ ՊԵԿ տվյալների փոխանցման տեղեկատվական ցանցը (այսուհետ՝ ցանց) ապահովում է էլեկտրոնային կապը վերադաս մարմնի և իր ստորաբաժանումների միջև:

Ցանցը պետք է ապահովի տեղեկատվության փոխանակման շուրջօրյա հնարավորություն, ներառելով ոչ աշխատանքային օրերը և ժամերը: Ցանցը պետք է լինի պաշտպանված, փակ ցանց և չպետք է լինի կապված ոչ մի այլ համակարգչային ցանցերին:

Կատարողը պետք է ապահովի ցանցում տվյալների փոխանցման արագությունը, անվտանգությունը և գաղտնիությունը:

Կատարողը պետք է ապահովի նաև ցանցի շուրջօրյա սպասարկումը և տեխնիկական աջակցումը:

Կատարողը պետք է իրականացնի գործող ցանցի հետագա սպասարկման ծառայությունները: Կատարողը ցանցը սպասարկելիս պետք է և կիրառի արագագործ, ապահով և ժամանակակից տեխնոլոգիաներ և սարքավորումներ: Ցանցի սպասարկման աշխատանքների նախագծման ժամանակ կատարողը պետք է ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետի հետ համաձայնեցնի կիրառվելիք տեխնոլոգիաները:

Կատարողը պետք է որոշի, թե ինչպիսի արտաքին սարքավորումներ և ծրագրեր են անհրաժեշտ ցանցը միացնելու կամ վերակառուցելու համար, ինչպես նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետի հետ համաձայնեցնի նախագծի նկարագրությունը, անհրաժեշտության դեպքում ներկայացնի հիմնավորումները և ապահովի նախագծի ներդրման ընթացքը:

Լարային հեռահաղորդակցական ցանցով տվյալների փոխանցման ծառայություններ /Օպտիկամանրաթելային կապի միջոցներով տվյալների փոխանցման տեղեկատվական ցանցի սպասարկման ծառայություններ/

Ծառայությունը պետք է տրամադրվի «OSI Layer 2» (տվյալների փոխանակման) մակարդակում, ինչը հնարավորություն կընձեռի ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին ստեղծել ժամանակակից էլեկտրոնային կառավարման վիրտուալ մասնավոր ցանց, որն ամբողջովին առանձնացված կլինի արտաքին աշխարհից և պաշտպանված կլինի արտաքին մուտքերից կամ ներխուժումներից՝ լինելով ներփակված զուտ ՀՀ ԿԱ ՊԵԿ ներքին ցանցային ենթակառուցվածքում:

Տվյալների փոխանցման տեղեկատվական ցանցի տեխնիկական բնութագիր

Անվանում	Նկարագրությունը
Առանձնացված կապուղի	Կատարողը պետք է ապահովի 2 առանձնացված օպտիկամանրաթելային կապուղու ապահովում և ցանցային ուղղորդում 2 իրարից անկախ կապի ծառայությունների օպերատոր ընկերություններից (այսուհետ՝ ԿԾՕ) ք. Երևան Ահարոնյան 12/3-ից (հիմնական հանգույց) դեպի ք. Դիլիջան պարզ լիճ 4 (պահուստային հանգույց) առնվազն Հավելված 1-ում նշված արագությամբ: *
	2 առանձնացված օպտիկամանրաթելային կապուղու ապահովում և ցանցային ուղղորդում 2 իրարից անկախ ԿԾՕ-ի կողմից հիմնական հանգույցի և հավելված 2-ի կետերի միջև: *
	Օպտիկամանրաթելային կապուղու ապահովում և ցանցային ուղղորդում Հավելված 3-ի, 4-ի կետերի և հիմնական հանգույցի միջև:
Պայմաններ	"routing with multiple redundancy paths and resiliency" (երթուղայնացման ուղիների ավտոմատացված փոխարկում) հիմնական, պահուստային հանգույցների և Հավելված 2,3,4-ի կետերի միջև:
	Կատարողը պետք է ապահովի առնվազն Հավելված 2,3,4-ում նշված համապատասխան արագություններով երաշխավորված, երկկողմանի(սիմետրիկ) տվյալների փոխանցման հնարավորություն ցանկացած կետում:
	• Անհրաժեշտ սարքավորումների տրամադրում, տեղադրում, կարգաբերում և սպասարկում • Ապահովել ցանկացած կետում ցանկացած VLAN Id օգտագործման հնարավորությունը • տեխնիկապես ապահովել ցանկացած կետում օգտագործվող ծառայությունների (հեռախոսակապ, ներքին ցանց, առանձնացված սերվերներ և այլն) բաժանումը տարբեր «Layer2» ենթացանցերի • տարբեր կետերի խմբավորումը ըստ ծառայությունների «Leyer2» ենթացանցերի • ապահովել համակցում վերոնշյալ «Leyer2» խմբերի միջև • ապահովել ցանկացած «Leyer2» պրոտոկոլների թափանցելիություն ցանկացած կետում
Լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայություն**	Ինտերնետ կապի տրամադրում հիմնական հանգույց առնվազն 300mb/s արագությամբ, ինչպես նաև առնվազն 500 mb/s արագությամբ ՀՀ տարածքում գործող .am տիրույթներում: Կատարողը պետք է տրամադրի x.x.x.x/26 (real ip) հասցեների տիրույթ:
Որակի պահանջներ	Մեկ տարվա ընթացքում՝ • հավելված 1,2,3 -ի յուրաքանչյուր կետում կապի խափանումների (բացակայությունների) քանակը չպետք է գերազանցի 4 անգամը: Սույն դրույթի իմաստով խափանում է համարվում կապի բացակայությունը՝ յուրաքանչյուր խափանման դեպքը 60 րոպեից ավելի ժամանակով; • հավելված 4-ի յուրաքանչյուր կետում կապի խափանումների(բացակայությունների) քանակը չպետք է գերազանցի 6 անգամը: Սույն դրույթի իմաստով խափանում է համարվում կապի բացակայությունը՝ յուրաքանչյուր խափանման դեպքը 120 րոպեից ավելի ժամանակով:

	Միևնույն ժամանակ մեկ ամսվա ընթացքում հավելված 1,2,3 -ի որևէ կետում կապի խափանումների (բացակայությունների) ժամանակահատվածը չպետք է գերազանցի 120 րոպեն, իսկ հավելված 4-ի որևէ կետում՝ 240 րոպեն: Սույն դրույթի իմաստով կապի խափանման (բացակայության) ժամանակը հաշվարկվում է որպես մեկ ամսվա ընթացքում տվյալ կետում կապի բոլոր խափանումների (բացակայությունների) ժամանակահատվածների հանրագումար:

* Նշված հանգույցների միջև Կատարողը պետք է ապահովի երկու իրարից անկախ տեղեկատվական ցանց՝ չօգտագործելով միմյանց հետ խաչվող (համընկնող) կապուղիներ, հանգույցներ և այլն:

** Կատարողը պետք է ապահովի ՀՀ կառավարության 20.10.2016թ. N 1069-Ն որոշման պահանջները:

Հավելված 1

Հ/Հ	Անվանումը	Հասցեն	Արագություն
1.	ՀՀ ՊԵԿ վերադաս մարմին, Ուսումնական կենտրոն	ք.Երևան, Ահարոնյան փող. 12/3	5Gb/s
2.	ՀՀ ՊԵԿ պահուստային հանգույց	ք.Դիլիջան, Պարզ լիճ փող. 4	5Gb/s

Հավելված 2

Հ/Հ	Անվանումը	Հասցեն	Արագություն
1.	Բավրայի մաքսակետ	Բավրա համանյք	60Mb/s
2.	Բագրատաշենի մաքսակետ	Բագրատաշեն համայնք	60Mb/s
3.	Գոգավան-Պրիվոլնոյե մաքսակետ	գ.Գոգավան	60Mb/s
4.	Մեղրիի մաքսակետ	Կարճևանի համայնք	60Mb/s
5.	Այրում-Ջիլիզա մաքսակետ	Այրում երկաթուղային կայարան	50Mb/s
6.	ՀՀ ՊԵԿ վերադաս մարմին	ք.Երևան, Մ.Խորենացու-3,7,	2Gb/s
7.	ՀՀ ՊԵԿ վերադաս մարմին, Արարատյան տարածաշրջանային ՄՏ, Ակցիզային հարկով հարկվող ապրանքների Մ/ՄՏ, Միջազգային ճանապարհային փոխադրումների Մ/ՄՏ, Ուսումնական կենտրոն	ք.Երևան, Ծովակալ Իսակովի 10	1Gb/s
8.	<<Զվարթնոց>> Մաքսատուն, Միջազգային փոստային և սուրհանդակային առաքումներով փոխադրվող ապրանքների Մ/ՄՏ	Զվարթնոց օդանավակայան, բեռնային և ուղևորային մասնաշենքեր	100Mb/s
9.	Ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների Մ/ՄՏ	ք.Երևան, Արշակունյաց-127/21	100Mb/s

Հավելված 3

Հ/Հ	Անվանումը	Հասցեն	Արագություն
1.	ՀՀ ՊԵԿ վերադաս մարմին, Խոշոր հարկ վճարողների ՀՏ, Արաբկիրի ՀՏ, Ուսումնական կենտրոն	ք.Երևան, Կոմիտաս-35	300Mb/s
2.	ՀՀ ՊԵԿ վերադաս մարմին, Կենտրոնի ՀՏ	ք.Երևան,Դեղատան-3	300Mb/s
3.	ՀՀ ՊԵԿ վերադաս մարմին	ք.Երևան, Տիգրան Մեծ 4	25Mb/s
4.	ՀՀ ՊԵԿ վերադաս մարմին	ք.Երևան, Անդրանիկի փող. 37/1 շենք	300Mb/s

5.	Միջազգային փոստային և սուրհանդակային առաքումներով փոխադրվող ապրանքների Մ/ՄՏ	ք.Երևան, Տիգրան Մեծ 1-ին նրբ.	30Mb/s
6.	Էրեբունու ՀՏ	ք.Երևան, Ս. Դավիթի 87ա	100Mb/s
7.	Մաշտոցի ՀՏ	ք.Երևան, Շինարարների փ. 3ա	100Mb/s
8.	Նոր-Նորքի ՀՏ	ք.Երևան, Մոլդովական-41/3	100Mb/s
9.	Շենգավիթի ՀՏ	ք.Երևան, Մանթաշյան փ. 27ա	100Mb/s
10.	Գյումրու ՏՀՏ	ք.Գյումրի, Հովսեփյան-1ա	100Mb/s

Հավելված 4

Հ/Հ	Անվանումը	Հասցեն	Արագություն
1.	<<Շիրակ>> օդանավակայանի մաքսակետ	Շիրակ օդանավակայան	30Mb/s
2.	Շիրակի տարածաշրջանային ՄՏ	ք.Գյումրի, Խորենացի-21	60Mb/s
3.	Գուգարքի տարածաշրջանային ՄՏ	ք.Վանաձոր, Մոսկովյան-44	60Mb/s
4.	Սյունիքի տարածաշրջանային ՄՏ	Սիսիան-Երևան մայրուղու 7-րդ կմ.	60Mb/s
5.	Աշտարակի ՏՀՏ	ք.Աշտարակ, Պռոշյան 29	60Mb/s
6.	Ապարանի բաժին	ք.Ապարան, Բաղրամյան 26	20Mb/s
7.	Արթիկի բաժին	ք.Արթիկ, Բաղրամյան-4	25Mb/s
8.	Թալինի բաժին	ք.Թալին, Խանջյան 9	25Mb/s
9.	Արմավիրի բաժին	ք.Արմավիր, Չարենցի-24	35Mb/s
10.	Արարատի բաժին	ք.Վեդի, Թումանյան 6	25Mb/s
11.	Արտաշատի ՏՀՏ	ք.Արտաշատ, Օգոստոսի-23, 83	60Mb/s
12.	Գավառի ՏՀՏ	ք.Գավառ, Գր.Լուսավորչի-12/2	60Mb/s
13.	Գորիսի ՏՀՏ	ք.Գորիս, Տաթևանցու-9	60Mb/s
14.	Եղեգնաձորի ՏՀՏ	ք.Եղեգնաձոր, Նարեկացի-8/3	60Mb/s
15.	Արմավիր ՏՀՏ	ք.Էջմիածին, Մաշտոցի-83ա	60Mb/s
16.	Իջևանի ՏՀՏ	ք.Իջևան, Մելիքբեկյան-3	60Mb/s
17.	Նոյեմբերյանի բաժին	ք.Նոյեմբերյան, Երևանյան 4	25Mb/s
18.	Դիլիջանի բաժին	ք.Դիլիջան, Մյասիկյան 66	25Mb/s
19.	Կապանի ՏՀՏ	ք.Կապան, Մինասյան փողոց 20 ա	50Mb/s
20.	Մեղրու բաժին	ք.Մեղրի, Զ.Անդրանիկի 2	25Mb/s
21.	Կոտայքի ՏՀՏ	ք.Աբովյան, Բարեկամության հրապարակ-1	60Mb/s
22.	Հրազդանի ՏՀՏ	ք.Հրազդան, Սպանդարյան փ 24/1	60Mb/s
23.	Չարենցավանի բաժին	ք.Չարենցավան, Աբովյան փողոց 8	25Mb/s
24.	Մասիսի բաժին	ք.Մասիս, Քաղաքապետարանի շենք	20Mb/s
25.	Մարտունու բաժին	ք.Մարտունի, Շահումյան-2	20Mb/s
26.	Նաիրիի բաժին	ք.Եղվարդ, Երևանյան-10ա	30Mb/s
27.	Սևանի ՏՀՏ	ք.Սևան, Սայաթ-Նովա-1/1	60Mb/s
28.	Ճամբարակի բաժին	ք.Ճամբարակ, Գ. Նժդեհի 125	15Mb/s
29.	Սիսիանի բաժին	ք.Սիսիան, Սիսակյան-41գ	25Mb/s
30.	Վանաձորի ՏՀՏ	ք.Վանաձոր, Վարդանանց 11	60Mb/s
31.	Թումանյանի բաժին	ք.Ալավերդի, Թումանյան 1ա	25Mb/s
32.	Տաշիրի բաժին	ք.Տաշիր, Ջահուկյան 6	25Mb/s
33.	Հայփոստ մասնաճյուղ 3309	Քաջարան, Լեռնագործների 4/2	8Mb/s
34.	Հայփոստ մասնաճյուղ 3901	ք.Դիլիջան, Մյասնիկյան 62	8Mb/s

35.	Հայփոստ մասնաճյուղ 1901	Ստեփանավան, Միլիոնի 5	8Mb/s
36.	Հայփոստ մասնաճյուղ 1826	ք.Սպիտակ	8Mb/s
37.	Հայփոստ մասնաճյուղ 1601	Վարդենիս, Երիտասարդության 15	8Mb/s
38.	Հայփոստ մասնաճյուղ 4201	ք.Բերդ, Մաշտոցի 29	8Mb/s

Ծառայության մատուցման ժամկետը

Ծառայության մատուցումը իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա և համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 325 օրացուցային օրվա ընթացքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 90001106575
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝
Ա.Սահակյան

ԿԱՏԱՐՈՂ
«Յուքոմ» ՍՊԸ

ք. Երևան, Տերյան 19, բն. 4
ՀՎՀՀ 00024873
Հ/Հ 217001264993001
«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
«Յուքոմ» ՍՊԸ-ի տնօրեն՝
Հ.Եսայան

Հավելված 2
<< 09 >> հունվար 2017 թ. կնքված
N ՊԵԿ-ՇՀԾՁԲ-17-2-15/18 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
«09» հունվարի 2017 թ. կնքված
N ՊԵԿ-ՇՀԾՁԲ-17-2-15/18 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն